ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/97» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մարտիրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ներսիսյան, Մ. Կլեկչյան, Ս. Սահակյան, Ե. Մաթևոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Զալինյան

1. Հայտերի բացման մասին

1.1. Հայտերի բացման.

- **վայրը՝** Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ

-օրը՝ 31 մարտի 2017թ.

-ժամը՝ 10:00

1.2. Ընդունել ի գիտություն, որ **«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/97»** ծածկագրով ընթացակարգի հրավերին էլեկտրոնային համակարգով /armeps.am/ հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1.	**Սիտի սայնս ՍՊԸ**
2.	**ԱՁ Աշոտ Ազիզյան**

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

1.3. Մասնակիցների կողմից ներկայացված յուրաքանչյուր բացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են:
Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

1.4. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ.

* **«Սիտի սայնս» ՍՊԸ**–ի հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ մասնակցի կողմից ներկայացված հավելված 1-ի 3-րդ կետով ստույգ նշված չէ հայտով ներկայացված յուրաքանչյուր չափաբաժին որ երկրի արտադրության ապրանք է հանդիսանում:

* **Ա/Ձ Աշոտ Ազիզյանի** հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ մասնակցի կողմից ներկայացված հավելված 1-ի 3-րդ կետով ստույգ նշված չէ հայտով ներկայացված յուրաքանչյուր չափաբաժին որ երկրի արտադրության ապրանք է հանդիսանում:

Ինչպես նաև Ա/Ձ Աշոտ Ազիզյանի հայտում արձանագրվել է ևս մեկ անհամապատասխանություն՝ հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1-ում նշված է եղել, որ մասնակիցը ՀՀ ռեզիդենտ է, սակայն կցել է Հավելված 3.5-ը՝ Հավելված 3.4-ի փոխարեն:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

1.5. Գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետի դրույթով, **Ա/Ձ Աշոտ Ազիզյանի** և **«Սիտի սայնս» ՍՊԸ**–ի հայտերում արձանագրված անհամապատասխանությունները որակել «անհամապատասխանություն ոչ գնային պայմանների մասով» և Մատակարարներին տրվեց **1 օր ժամանակ** (մասնակցին ծանուցելու պահից հաշված) այն շտկելու համար՝ կասեցնելով գնահատման նիստը:
Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝		Գ. Մարտիրոսյան
Անդամներ՝		Ս. Ներսիսյան
		Մ. Կլեկչյան
		Ս. Սահակյան
		Ե. Մաթևոսյան
Համակարգող՝		Մ. Զալինյան